

ԱՆՀՈԳՆԱԿԱՆՆԵՐՆ ԻՏԱԼԵՐԵՆՈՒՄ,
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

Հոգնակի թվի կազմությունը կապված է իմացական զարգացման այն աստիճանի հետ, երբ մարդը կարողացավ թվարկվող առարկաներից մեկը քանակային հարաբերության մեջ հակադրել նույն տեսակի մնացած առարկաներին: Կառուցվածքային և զործառական հատկություններով հոգնակին հակադրվում է եզակիին, իսկ թվային այլ ենթակարգերի, ասենք երկակիի առկայության դեպքում՝ նաև երկակիին:

Կան բառային իմաստի բնույթով պայմանավորված եզականաձև բառերի առանձին խմբավորումներ, որոնք թվակարգային հայեցակետերի նկատմամբ չեզոք են, չեն առնչվում մեկի և մեկից ավելիի քանակային հարաբերակցությանը, հոգնակիի համապատասխան ձևեր չեն կազմում, հետևաբար անհոգնական են: Կան նաև այնպիսի բառեր, որոնք թեև հոգնակի ձևեր կազմում են, այդ անում են հոգնակի բառաձևի բառիմաստային մեկուսացումով, որով գոյանում է եզակի-հոգնակի հակադրության բառային անհարաբերակցություն: Սա նշանակում է, որ անհոգնականությունը լայն հասկացողություն է. գոյություն ունեն բուն անհոգնականներ, որոնք, առհասարակ, թվակարգից դուրս են, նրանցից հոգնակի ձևեր կազմել հնարավոր չէ, և կան բառիմաստային ուրույն հատկություններով խմբավորումներ, որոնք հարաբերականորեն անհոգնական են:

Եզականաձև անհոգնականները կարող են երեք կարգի դրսևորում ունենալ.

ա) անհոգնականություն ուղղակի բառիմաստով պայմանավորված,

բ) անհոգնականություն փոխաբերական իմաստավորումներով,

գ) անհոգնականություն բազմիմաստության որևէ իմաստով:

Առաջին դեպքում անհոգնականությունը կարող է պայմանավորել այնպիսի բառիմաստներ, որոնք ինքնին չթվարկվող առարկաներ (հասկացություններ) են արտահայտում: Այսպիսի բառիմաստները չեզոք են մեկի և մեկից ավելի քանակային հարաբերության հայեցակետերի նկատմամբ: Նրանց մի մասը միայն լրացուցիչ բառային իմաստավորումների դեպքում կարող են հանդուրժել այդ հայեցակետը: Անհոգնականությունը կապված է վերացականության, հավաքականության, անհատականության, նյութայնության, զանգվածայնության իմաստների հետ:

Վերացականությունը և նյութայնությունը այնպիսի հասկացություններ են արտահայտում, որոնք թվարկման ենթակա չեն. անհատականությունը բացառում է բազմության գաղափարը, հետևապես և հոգնակին. հավաքականությունը եզակի ձևում արտահայտելով բազմության գաղափարը՝ հոգնակի կազմելու կարիք չունի:

Կան բառեր, որոնք իրենց ուղղակի իմաստով հոգնակի կազմել կարող են, բայց փոխաբերական կիրառություններում դա բացառում են: Բազմիմաստ

որոշ բառեր որևէ մեկ իմաստով կարող են անհոգնական լինել: Այսպես՝ ծաղիկ բառը կարող է նշանակել նաև հիվանդության տեսակ. այս իմաստի դեպքում նա անհոգնական է:

Անհոգնականությունը պայմանավորող գործոնները աշխարհի լեզուներում ունեն իմաստային ընդհանրական հիմունքներ, սակայն կառուցվածքային որոշ գծեր, յուրահատկություններ երբեմն նեղացնում կամ ընդլայնում են նրա դրսևորումների շրջանակները:

Իտալերենում կան հաշվելի (թվարկվող) առարկայի հասկացություն արտահայտող որոշ բառեր, որոնք հոգնակի ձևեր չեն կազմում: Օրինակ՝ *citta, università*: Սակայն սրանք, ըստ էության, անհոգնական են իրենց կառուցվածքով: Այս գոյականները սովորաբար անհոգնականաձև միավորի գործառույթ են կատարում՝ հանդես գալով համապատասխան քերականական միջավայրում: Օրինակ՝

Roma è una bella citta.

Հոռնը գեղեցիկ քաղաք է:

Milano e Firenze sono due belle citta italiane.

Միլանը և Ֆլորենցիան իտալական երկու գեղեցիկ քաղաքներ են:

Պետք է նշել, որ անգլերենում կան որոշ բառեր, որոնք ընդհանրապես եզակի ձև չունեն: Սակայն, ըստ էության, միայն կառուցվածքով են անեզական, իրականում դրանք հանդես են գալիս միայն եզակի թվով: Օրինակ՝

politics, economics, physics

քաղաքագիտություն, տնտեսագիտություն, ֆիզիկա

billiards, darts, dominoes

բիլիարդ, նիզակ, դոմինո

measles, կարմրուկ

Politics is an interesting subject.

Քաղաքագիտությունը հետաքրքիր առարկա է:

Եթե թվի քերականական կարգը ներկայանում է իբրև եզակի-հոգնակի հակադրություն, որի հիմքում ընկած է մեկ և մեկից ավելիի իմացական հայեցակետը, ապա, բնականաբար, անհոգնականները դուրս են մնում թվակարգի ոլորտից: Սրանք ոչ թե եզակի թիվ են ներկայացնում, այլ իրենց ուրույն բառիմաստային հատկություններով պայմանավորված կազմում են առանձին խմբավորումներ: Այդ իմաստավորումներից են.

1. Հատուկ անուններ (անձնանուններ, կենդանիների անուններ, կեղծանուններ, մականուններ, տեղանուններ) իրենց ուղղակի կիրառության դեպքում սովորաբար բացառում են հոգնակին*, այսպես անհոգնական են՝

Paolo, Maria, Toscana, Roma

Վարդան, Արագած, Շիրակ, Սրաքս

London, Mary, Scotland, England

Ինչպես ընդգծում է Գ. Խ. Բարսեղյանը, «Հատուկ անվան ընդհանուր հասկացություն կամ տեսակի անուն չլինելու և միշտ առանձին անձ կամ առարկա անվանելու հանգամանքը նրան զրկում է գոյականի թվի քերականական հատկանիշից: Հոգնակի թիվը հատուկ անվան բնորոշ կարգ չէ»:**

Անհոգնական է նաև բնության մեջ մեկ հատ կամ այդպիսին դիտված

առարկայի անունը: Այս կարգի առարկան բառիմաստի մեջ ներկայանում է նույն անհատականության դրսևորմամբ, ինչ որ նկատեցինք հատուկ անունների կապակցությամբ: Սակայն հատուկ անունը առանձնացնում է միասեռ առարկաներից մեկը՝ բացառելով մյուս անդամները, մինչդեռ այստեղ գործ ունենք այնպիսինի հետ, որը զիտակցության մեջ տրվում է իբրև մեկը, և որը տեսակից չի առանձնացված: Այդպիսի իմաստավորում ունեն, օրինակ՝

il sole, la luna, il cielo, il mondo, il nord, il sud

արև, լուսին, երկինք, երկիր, հյուսիս, հարավ

the sun, the moon, the sky, the earth, the north, the south:

Սրանց են հետևում նաև տարվա ամիսների, շաբաթվա օրերի անունները: Եթե կոնկրետ (թանձրացական) հասկացությունները անհատականացմամբ արտահայտություն են գտնում հատուկ անունների մեջ, որ սովորաբար կատարվում է փոխաբերական անցումներով, ապա մի շարք ընդհանուր-վերացական հասկացություններ անհատականացված տեսքով են ներկայանում: Սա վերաբերում է զիտության ճյուղերն արտահայտող հասկացություններին (անուններին)՝

Linguistics, Geography, Physics, Mathematics

լեզվաբանություն, աշխարհագրություն, ֆիզիկա, մաթեմատիկա

linguistica, geografia, fisica, matematica

հասարակական կացութաձևերի անուններին՝ socialismo, comunismo

սոցիալիզմ, կոմունիզմ

socialism, communism

Սրանք հատուկ անուններ չեն, բայց իբրև հասկացություններ եզրավորված են, քանակային տրոհման չեն ենթարկվում: Իմաստային անհատականացումն այնքան ուժեղ է, որ հնարավոր չէ այդ անունից կազմել հոգնակի. դրանք անհոգնական են: Անհոգնականությունը կապված է նաև այն գոյականների հետ, որոնք անհաշվելի առարկաների անուններ են: Այս կարգի անունների դիտարկման ելակետը նույնն է: Գոյական անվան քերականական վարքագիծը կախված է այն համգամանքից, թե նրա նշանակած առարկան ինչ հատկությամբ է ներկայանում իմացական ընկալման մեջ. առարկան ունի դիրք, ձև, չափս, ծավալ, կարող է ընկալվել իբրև միասեռ ամբողջություն, իբրև զանգվածայնություն, վերացականություն և այլն:

2. **Չանգվածայնությունը** բնորոշվում է անբաժանական, չտրոհվող, թվարկման չենթարկվող հատկությամբ, և, իբրև այդպիսին, այն բացառում է թվակարգի իմացական հայեցակետը: Այդպիսի նշանակությամբ բառերը անհոգնական են, ինչպես՝

olio, latte, riso, ossigeno

յուղ, կաթ, բրինձ, օթվածին

oil, milk, rice, oxygen

3. **Վերացական գոյականները** արտահայտում են միասեռ հատկանիշի, հատկության ընդհանրությունը՝

onestà, coraggio, giustizia, indifferenza, generosità

մեծություն, խիզախություն, ազնվություն, անտարբերություն, առատաձեռնություն

honesty, justice, anger, indifference, generosity

Անհոգնական գոյականների շարքին են դասվում նաև շատ եզակաճան գոյականներ, որոնք ցույց են տալիս միասեռ առարկաների այնպիսի ամբողջություն, որի մեջ մտնող միավորների բաժանական ընկալումը հետին պլան է մղված, գերիշխում է ամբողջության, միասնության, միավորվածության գաղափարը: Օրինակ բանակ հավաքականը զինվորների ամբողջություն է, անտառը՝ ծառերի և այլն:

Հավաքականը ենթադրում է բազմություն, իսկ բազմության գաղափարը ավելորդ է դարձնում հոգնակին:

Սակայն պետք է նշել, որ անգլերենում հավաքական գոյականը կարող է օգտագործվել և եզակի թվով, և հոգնակի: Եզակի թվով է օգտագործվում այն դեպքում, երբ տվյալ գոյականի բաժանական ընկալումը հետին պլան է մղված: Այսպես՝

The family is determined to press its claim.

The family has decided to move to Nottingham.

This team is / are going to lose.

Եզրակացնելով պետք է նշել, որ անհոգնականությունը լայն հասկացողություն է, քանի որ գոյություն ունեն բուն անհոգնականներ, որոնք առհասարակ թվակարգից դուրս են, նրանցից հոգնակի ձևեր կազմել հնարավոր չէ. և կան բառիմաստային ուրույն հատկություններով խմբավորումներ, որոնք հարաբերականորեն անհոգնական են: Անհոգնականությունը պայմանավորող գործոնները իտալերենում, հայերենում և անգլերենում ունեն իմաստային ընդհանրական հիմունքներ, սակայն կառուցվածքային որոշ գծեր, յուրահատկություններ երբեմն նեղացնում կամ ընդլայնում են նրա դրսևորումների շրջանակները վերոհիշյալ լեզուներում:

ՃԱՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

* «Ճշգրիտ իմաստով. — գրում է Օ. Եսպերսենը. — ոչ մի հատուկ անուն չի կարող հոգնակի թվի ձևեր ունենալ» (Օ. Есперсен. Философия грамматики. М., 1958, стр. 74–75).

** Գ. Խ. Բարսեղյան, Հատուկ անուն, Երևան, 1964, էջ 13:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Fogliato Silvia. Testa Maria Carla. Italiano. L'uso e la Grammatica.
2. Radicchi Sandra. Mezzedimi Meris. Corso di Lingua Italiana. Bonacci editore. Roma. 1989.
3. Silvestroni Marcello. Bura Claudio. Elisabetta Chiacchella. Valentina Guim Armani. L'Italiano e l'Italia. Guerra Edizioni. Pavese Perugia 1999.
4. E. M. Gordon. I. P. Krylova. A Grammar of Present-day English. Higher School Publishing House Moscow 1974.
5. E. A. Notanson. Practical English Grammar by Correspondence. Higher School Publishing House Moscow 1973.
6. Parisi - Antinucci. Elementi di Grammatica. Torino, 1973.
7. Ասատրյան Մ. Ե., Ժամանակակից հայոց լեզու. Չնաբանություն, Երևան, 1989.
8. Պետրոսյան Գ. Չ., Գոյականի թվի կարգը հայերենում, Երևան, 1972:

- 9 Սուրիանյան Ա. Ս., ժամանակակից հայոց լեզու: Հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն, Երևան, 1982:
- 10 Ջահուկյան Չ. Բ., Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969:

Փ. Օգանեսյան

SINGULARIA TANTUM ԱՐՄՅԱՆՏԵՂՈՂՈՒՄԻ, ԻՏԱԼՅԱՆՏԵՂՈՂՈՒՄԻ ԵՎ ԱՆԳԼԻՅԱՆՏԵՂՈՂՈՒՄԻ

Статья посвящена анализу "Singularia tantum" армянского, итальянского и английского языков. В рамках исследуемых языков выявлены функционально-семантические характеристики этих существительных.

Բ. Ոսկանյան

SINGULARIA TANTUMS IN ITALIAN, ARMENIAN AND ENGLISH

The aim of this research work is to present Singularia tantums in Italian, Armenian and English. Grammatical forms of different languages very seldom coincide fully as to the scope of their meaning and function. As a rule, there is only partial equivalence. Thus, for instance, the category of number of noun in Italian, Armenian and English seems to coincide and, indeed, does coincide in very many cases of their use — table—tavola—տիղան, tables... etc. However, there are many instances where this is not the case, in other words where an English plural form is rendered through an Italian or Armenian singular form and vice versa; this is especially common among the so-called Singularia and Pluralia tantums.